ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ ՄԵՐՈՒԺԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՎՐՈՏԻԶՄԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ
(ԲՌՆԱԳԱՂԹԱԾՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ
հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Նաիրա Ռաֆիկի Հակոբյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մելս Պարգևի Մկրտումյան**

հոգեբանական գիտությունների թեկնածու **Արմինե Ռաֆիկի Մուրադյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ Պետական կառավարման ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026թ. հունվարի 27-ին, ժամը 12:00-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հոգեբանության թիվ 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 26.12.2025 թ.:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի
Գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Կամո Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից հասարակության գլոբալ քաղաքակրթական փոփոխությունների պայմաններում ի հայտ են գալիս երևույթներ, որոնք զգալիորեն ազդում են բնակչության հոգեկան առողջության վրա, դրսևորվում են ոչ միայն անհատական նևրոտիկ նշաններով, այլև արտաքին միջավայրին հարմարվելու և սոցիալական կառուցվածքում ինքնադրսևորվելու ունակության խնդիրների միջոցով: Ակնհայտ է դառնում, որ հոգեբանական գիտությունը ավելի ու ավելի է հետաքրքրվում այնպիսի հիմնախնդիրների ուսումնասիրությամբ, որոնք ուղղված են սոցիալական նևրոտիզմի դրդապատճառների բացահայտմանը, ինչպես նաև սոցիալ-միջավայրային գործոններով պայմանավորված արտաքին միջավայրին հարմարվելու ունակությունների, այդ թվում՝ տագնապայնության մակարդակի թուլացման, ապագայի հանդեպ սպասումների իմաստավորման, հույզերի կարգավորման և, ընդհանուր առմամբ, սոցիալական կառուցվածքի փոփոխվող պայմաններում ինքնադրսևորման վերհանմանը: Այս երևույթի ուսումնասիրության արդիականությունը դրսևորվում է հասարակական կյանքի տարբեր ասպեկտներ ընդգրկող ժամանակակից փոխակերպվող սոցիալ-հոգեբանական գործընթացներում: Հոգեբանության մեջ սոցիալական նևրոտիզմի՝ որպես անկախ գործընթացի, դեստրուկտիվ զարգացումը քիչ է ուսումնասիրվել: Այն հարցը, թե ինչ ազդեցություն ունեն անբարենպաստ կամ չկարգավորված սոցիալական հարաբերությունները սոցիալական նևրոտիզմի դեստրուկտիվ զարգացման վրա, լիովին լուսաբանված չէ:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել սոցիալական նևրոտիզմի երևույթը անբարենպաստ սոցիալ-միջավայրային պայմանների ու անձնական խոցելիությունների փոխկապվածության համատեքստում, մշակել սոցիալական նևրոտիզմի բացասական ներուժի մարմանն ուղղված մեթոդաբանական ուղենիշներ (բռնագաղթած անձանց և սոցիալական խմբերի օրինակով):

Հետազոտության նպատակից ելնելով՝ առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

ուսումնասիրել նևրոտիզմի սահմանման կոնցեպտուալ հիմնադրույթներն ու ժամանակակից մեկնությունները.

պարզել սոցիալական նևրոտիզմի սոցիալ-համատեքստային շրջանակը.

ներկայացնել սոցիալական նևրոտիզմի հայեցակարգային քննությունը բռնագաղթածների օրինակով.

փորձարարական եղանակով վերհանել սոցիալական նևրոտիզմի այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են խմբային հուսալիության մակարդակը, հետաձգված կյանքի համախտանիշը, սոցիալական ֆրուստրացիայի և տագնապայնության մակարդակը.

համահարաբերակցային վերլուծության միջոցով վերլուծել սոցիալական նևրոտիզմի հատկանիշների փոխկապվածությունը բռնագաղթածների օրինակով.

ներկայացնել գիտագործնական առաջարկներ՝ ուղղված սոցիալական նևրոտիզմի բացասական ներուժի մարմանը:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ բռնագաղթած անձանց շրջանում սոցիալական նևրոտիզմի գնահատման սոցիալ-հոգեբանական հայեցակարգը բնութագրվում է հետաձգված կյանքի համախտանիշի, սոցիալական ֆրուստրացիայի, տագնապայնության և նեյրոտիզմի մակարդակի դրական համահարաբերակցային կապերով:

Ենթավարկածներն են՝

1. Որքան բարձր է կյանքից բավարարվածության և խմբային հուսալիության աստիճանը, այնքան ավելի թույլ է արտահայտվում սոցիալական նևրոտիզմի գնահատումը:
2. Սոցիալական նևրոտիզմը գնահատվում է դրական համահարաբերակցային կապերով սոցիալական միջավայրում տարբեր տարիքի անձանց փոխկախյալության աստիճանի հետ:

Հետազոտության օբյեկտն է՝ սոցիալական նևրոտիզմի գնահատման հայեցակարգը:

Հետազոտության առարկան է՝ սոցիալական նևրոտիզմի գնահատման հայեցակարգը բռնագաղթածների իմիգրացիոն գործընթացներում:

Մեթոդաբանական և տեսական հիմքերը: Հետազոտության տեսամեթոդական հիմք են հանդիսացել Կ. Հորնիի՝ նևրոտիզմի սոցիալ-միջավայրային բնութագրումները, Հ. Այզենկի՝ նեյրոտիզմի անձնային հատկությունների սահմանումները, Չ. Սպիլբերգերի՝ անձնային և իրավիճակային տագնապայնության ձևակերպումները, Ե. Դիների, Ռ. Եմմընսի, Ռ. Լարսենի և Ս. Գրիֆֆինի՝ կյանքից բավարարվածության գնահատման մեթոդաբանական մոտեցումները, Բ. Ուայնհոլդի, Ջ. Ուայնհոլդի՝ անձի փոխկախյալության հիմնավորումները, Լ. Վասսերմանի, Բ. Իովլևի, Մ. Բերեբինի՝ սոցիալական ֆրուստրացիայի սահմանումները, Հ. Իզգարդի, Մ. Ռոլոյի, Պ. Ջիանարոսի, Տ. Վեյգերի՝ տագնապայնության և սթրեսի հաղթահարման տեսական մոտեցումները, Ռ. Նեմովի, Ա. Լուտոշկինի և Վ. Խաշչենկոյի՝ խմբային հուսալիության տեսական մեկնությունները և այլն:

Աշխատանքում կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները՝

- ✓ Զրույցի մեթոդ
- ✓ Թեստավորման մեթոդ՝ ըստ ստորև նշված մեթոդիկաների՝
- ✓ Այզենկի անձնային հարցարան (EPQ)
- ✓ «Մեծ հնգյակ» հարցարան
- ✓ Սպիլբերգեր-Խանինի անձնային և իրավիճակային տագնապայնության թեստ
- ✓ «Կյանքից բավարարվածության» սանդղակ
- ✓ «Հետաձգված կյանքի համախտանիշի ախտորոշում» հեղինակային հարցաթերթիկ
- ✓ Փոխկախյալության ինքնագնահատման սանդղակ
- ✓ Սոցիալական ֆրուստրացիայի գնահատման սանդղակ
- ✓ Խմբում ինտեգրման աստիճանը որոշելու մեթոդիկա՝ թիմի սոցիալ-հոգեբանական ինքնագնահատականը
- ✓ Թիմի հոգեբանական մթնոլորտի բացահայտման մեթոդիկա

- ✓ Սոցիալ-հոգեբանական մթնոլորտի գնահատմամբ տեսա-անալոգային սանդղակ
- ✓ Սոցիալական նևրոտիզմի գնահատման հեղինակային սանդղակ
- ✓ Համահարաբերակցային վերլուծության մեթոդ

Աշխատանքի գիտական նորույթը

- ✓ Սահմանվել է սոցիալական նևրոտիզմի սոցիալ-համատեքստային բնութագիրը:
- ✓ Առանձնացվել են նևրոտիզմի սահմանման սոցիալ-միջավայրային հատկանիշները:
- ✓ Բացահայտվել են սոցիալական նևրոտիզմի գնահատման հայեցակարգային բաղադրիչները և դրանց միջև համահարբերակցային կապերը, ինչպիսիք են՝ մի կողմից՝ հետաձգված կյանքի համախտանիշի, սոցիալական ֆրուստրացիայի, տագնապայնության, փոխկախյալության և նեյրոտիզմի մակարդակի դրական և, մյուս կողմից՝ կյանքից բավարարվածության, խմբային հուսալիության և սոցիալական նևրոտիզմի բացասական համահարաբերակցային կապերը:
- ✓ Վեր են հանվել նոր միջավայրին անձի հարմարման ընթացքում սոցիալական նևրոտիզմի բացասական ազդեցությունը նվազեցնելու մեթոդական գործիքները:

Տեսական և գործնական նշանակությունը: Սոցիալական նևրոտիզմի ուսումնասիրությունը կարող է լույս սփռել բռնագաղթածների իմիգրացիոն գործընթացների սոցիալ-միջավայրային բնութագրերի վրա:

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են՝

- ✓ Սոցիալական նևրոտիզմի հայեցակարգը սոցիալ-հոգեբանական բազմաբաղադրիչ ֆենոմեն է, որը բնութագրվում է սոցիալ-միջավայրային գործոնների տիրապետմամբ և սոցիալական միջավայրում անձի հուզական վարքային ոլորտների ինքնավերահսկման նվազմամբ:
- ✓ Սոցիալական նևրոտիզմի հայեցակարգի գնահատումն ուղեկցվում է հետաձգված կյանքի համախտանիշի շեշտադրմամբ և ներկայում անձի կարողությունների ու նպատակադրվածության սուբյեկտիվ սահմանափակմամբ:
- ✓ Սոցիալական նևրոտիզմի էական հատկանիշներից են սոցիալական ֆրուստրացիայի և տագնապայնության տիրապետող գործոնները նոր սոցիալական միջավայրում բռնագաղթած անձանց իմիգրացիոն գործընթացում:
- ✓ Սոցիալական նևրոտիզմի հայեցակարգի գնահատումն ուղեկցվում է կյանքից բավարարվածության և խմբային հուսալիության աստիճանի բացասական համահարաբերակցային կապերով:
- ✓ Բացահայտվել է որոշակի դրական համահարաբերակցային կապ սոցիալական նևրոտիզմի և անձնային մակարդակում նեյրոտիզմի մակարդակների միջև:

- ✓ Սոցիալական նևրոտիզմի հայեցակարգի գնահատումն իրականացվում է խմբում ինտեգրման ինքնագնահատականի և ներխմբային հոգեբանական մթնոլորտի հոգեչափական գործիքակազմի միջոցով:

Հետազոտության արդյունքների հուսալիությունն ու հավաստիությունը հիմնավորված են հիմնախնդրին առնչվող մասնագիտական գրականության ընտրությամբ և ուսումնասիրությամբ, հետազոտության տեսամեթոդական հիմնավորմամբ, աշխատանքի նպատակին համապատասխան խնդիրների մշակմամբ, հավաստի փորձարարական մեթոդական գործիքակազմի ընտրությամբ, ստացված արդյունքների բազմակողմանի վերլուծությամբ և մեկնաբանմամբ:

Աշխատանքի փորձարկումն ու հրապարակային քննարկումը: Հետազոտության արդյունքները փորձարկվել են հետևյալ աջակցման կենտրոններում և ընկերություններում՝

1. «Հյուման Հարմոնի Սենթեր» հոգեկան առողջության կենտրոն
2. «Միթ Քյու» հոգեկան առողջության առցանց հարթակ
3. «Ռաֆիկ Պետրոսյան» հոգեբանական աջակցման կենտրոն
4. «Բեստ Ինվեստ» ՍՊԸ
5. «HistoGen pathology center» Պաթոլոգիայի հայ-գերմանական գիտագործնական կենտրոն
6. «Փսիլայֆ» հոգեբանական աջակցման կենտրոն
7. ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Հոգեբանական դիտարան»
8. «Զուլակենտրոն» ԲԲԸ

Հետազոտության արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ գիտակրթական կենտրոնի հոգեբանության ամբիոնի նիստերում, «Փսիլայֆ» հոգեբանական աջակցման կենտրոնի, Պաթոլոգիայի հայ-գերմանական գիտագործնական կենտրոնի, «Ռաֆիկ Պետրոսյան» հոգեբանական աջակցման կենտրոնի, «Միթ Քյու» հոգեկան առողջապահության օնլայն հարթակի և «Հյուման Հարմոնի Սենթեր» հոգեկան առողջության կենտրոնի կլոր սեղանների, սեմինարների և էքսպերտային քննարկումներում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, 138 տպագիր էջ: Օգտագործվել է 220 աղբյուր՝ հայերեն և օտար լեզուներով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին **«Սոցիալական նևրոտիզմի տեսական բնորոշումների սոցիալ-հոգեբանական քննությունը»** գլխում ներկայացվում և վերլուծության են ենթարկվում սոցիալական նևրոտիզմի ֆենոմենի տեսական մեկնությունները, վերլուծվում են սոցիալական նևրոտիզմի սոցիալ-հոգեբանական բնորոշումները: Առաջին «Սոցիալական նևրոտիզմի ֆենոմենի տեսական մեկնությունները» ենթագլխում ներկայացվում են Զ. Ֆրոյդի, Ա. Ադլերի, Ֆ. Պերլսի, Կ. Հորնիի, Գ. Այզենկի, Ռ. Մեյի, այլոց տեսական մոտեցումները նևրոտիզմի բնույթի և պատճառների վերաբերյալ, շեշտադրվել են որպես նևրոտիզմի դրսևորման գործոններ անհատին սահմանափակող սոցիալական

պայմանները, նորմերը և կարծրատիպերը: Մատնանշվել է, որ սոցիալապես առաջացրած բացասական երևույթները մեծ մասամբ ընկալվում են որպես անձի կառուցվածքային դեստրուկտիվ փոխակերպումների աղբյուրներից մեկը, ինչը հանգեցնում է նևրոտիզմի շեշտադրմանը և միջանձնային գործունեության դեստրուկտիվ դրսևորումներին: Երկրորդ՝ «Սոցիալական նևրոտիզմի սոցիալ-հոգեբանական բնորոշումների վերլուծություն» ենթագլխում սոցիալական նևրոտիզմի հասկացությունը ներկայացվում է որպես անձի որակական բնութագիր, որը դրսևորվում է ինչպես անհատական, այնպես էլ հասարակական մակարդակներում: Վերլուծվում են սոցիալական նևրոտիզմի սոցիալ-հոգեբանական այնպիսի բնորոշումներ, որոնց համաձայն սոցիալական նևրոտիզմի վիճակը տեղի է ունենում ոչ թե սոցիալ-տնտեսական և այլ փոխակերպումների պատճառով, այլ այն պատճառով, որ հասարակության որոշակի հակասություններ սրվում են այդ ժամանակահատվածներում: Իրականացված վերլուծությունը թույլ է տալիս ձևակերպել սոցիալական նևրոտիզմի հայեցակարգը՝ որպես անձի գործունեության և հոգեկան առողջության վրա ազդող որակական հատկանիշ և ցույց տալ սոցիալական նևրոտիզմի և խմբային հուսալիության մակարդակների միջև հակադարձ համահարաբերակցային կապերը:

Ատենախոսության երկրորդ **«Սոցիալական նեվրոտիզմի հայեցակարգը իմիգրացիոն գործընթացներում»** գլխում վերլուծության են ենթարկվում իմիգրացիոն գործընթացների հոգեբանական բնորոշումները և մեկնությունները: Ներկայացվում են Վ. Ի. Պերևեդենցևի, Ա. Բ. Բարիխինի գաղափարները միգրացիայի սահմանման վերաբերյալ: Որպես սոցիալ-հոգեբանական վերլուծական դաշտ՝ իմիգրացիոն գործընթացները հետաքրքրություն են ներկայացնում նոր սոցիալական միջավայրում անձանց և սոցիալական խմբերի ասիմիլյացիայի, ադապտացիայի, դիֆերենցիալ մեկուսացման, մարգինալության և այլ երևույթների սահմանման, վերհանման և ուսումնասիրման տեսանկյունից: Իմիգրացիոն գործընթացների, հատկապես, բռնի տեղահանության նշաններով, սոցիալ-հոգեբանական բնութագիրը կարելի է ներկայացնել տեղահանության հարկադիր բնույթով և դրա հետևանքով՝ տեղահանության որոշակի սոցիալ-հոգեբանական դրսևորումներով, ինչպիսիք են՝

- բռնի տեղահանված անձանց ֆիզիկական և հոգեկան բարեկեցության վատթարացումը.
- սոցիալական կարգավիճակի ու դերերի փոխակերպումը.
- աշխարհայացքային վերափոխումները.
- վստահության կորուստը.
- հաղորդակցական խնդիրները.
- ադապտիվ կարողությունների սահմանափակումը.
- ինտեգրատիվ ռեսուրսների թերի իրագործումը.
- հոգեսոմատիկ խնդիրների առաջացումը կամ խորացումը.
- բռնի տեղահանվածների հանդեպ հասարակական կարծիքի ձևավորումը:

«Իմիգրացիոն գործընթացներում սոցիալական նևրոտիզմի գնահատման հայեցակարգը» վերտառությամբ երկրորդ ենթագլխում ներկայացվում են սոցիալական նևրոտիզմի դեստրուկտիվ զարգացումը պայմանավորող թե՛ սուբյեկտիվ, թե՛ օբյեկտիվ տարբեր գործոնները: Վերլուծվում են իմիգրացիոն գործընթացների և նրանցում անձանց և սոցիալական խմբերի բռնի տեղահանության, բռնագաղթի և դրա սոցիալ-հոգեբանական հետևանքների վերաբերյալ տարբեր հեղինակների դիտարկումները, որոնք հանգեցնում են իմգրացիոն գործընթացներում սոցիալական նևրոտիզմի ֆենոմենի հայեցակարգային մոտեցմամբ մանրամասն ուսումնասիրելու գաղափարին: Սոցիալական նեյրոտիզմի գնահատման հայեցակարգն իրենից ներկայացնում է փորձարարական հետազոտության մեթոդաբանական հիմքը, որի արդյունքները և վերլուծությունը տրվում են ատենախոսության երրորդ՝ **«Իմիգրացիոն գործընթացներում սոցիալական նեվրոտիզմի հայեցակարգային հատկանիշների փորձարարական հետազոտություն»** գլխում: Երրորդ գլխի առաջին՝ **«Փորձարարական հետազոտության մեթոդական հիմքերը և կազմակերպումը»** ենթագլխում ներկայացված են իրականացված հետազոտությունների կազմակերպման մեթոդական հիմքերը, փորձարարական հետազոտության ընտրանքն ու կիրառված մեթոդների հիմնավորումները:

Հետազոտության հիմնական մեթոդներն են զրույցը, թեստավորումը, համահարաբերակցային վերլուծության մեթոդը: Ուսումնասիրությանը մասնակցել է ընդհանուր թվով 860 հարցվող: Մասնակիցների ընտրանքը (N=860) կազմված է եղել հիմնական (N=430) և ստուգիչ (N=430) խմբերից՝ յուրաքանչյուր խմբում հավասար սեռային բաշխվածությամբ (հիմնական խումբ՝ կանայք (N=215), տղամարդիկ (N=215), ստուգիչ խումբ՝ կանայք (N=215), տղամարդիկ (N=215)):

Հիմնական խմբում ներառվել են Արցախից (2020-2023 թթ. ընթացքում) և Սիրիայից (2018-2020 թթ. ընթացքում) բռնագաղթած անձինք. ստուգիչ խումբը կազմվել է Հայաստանի Հանրապետության բնակիչներից, որոնք երբևէ չեն բռնագաղթել և չեն ներգրավվել իմիգրացիոն գործընթացներում: Հետազոտական ընտրանքի տարիքային բաշխվածությունը հետևյալն է՝

- հիմնական խումբ 1 (N=86)՝ 18-20 տարեկան,
- հիմնական խումբ 2 (N=86)՝ 21-30 տարեկան,
- հիմնական խումբ 3 (N=86)՝ 31-40 տարեկան,
- հիմնական խումբ 4 (N=86)՝ 41-50 տարեկան,
- հիմնական խումբ 5 (N=86)՝ 51-60 տարեկան,
- ստուգիչ խումբ 1 (N=86)՝ 18-20 տարեկան,
- ստուգիչ խումբ 2 (N=86)՝ 21-30 տարեկան,
- ստուգիչ խումբ 3 (N=86)՝ 31-40 տարեկան,
- ստուգիչ խումբ 4 (N=86)՝ 41-50 տարեկան,
- ստուգիչ խումբ 5 (N=86)՝ 51-60 տարեկան:

Էթնիկական աֆիլիատիվ հատկանիշով փորձարարական հետազոտության ողջ ընտրանքը կազմված է եղել հայերից:

Վիճակագրական վերլուծությունը կատարվել է «JASP 0.17.03.0» ծրագրաշարի միջոցով՝ օգտագործելով Սփիրմենի մեթոդը: Շապիրո-Վիլկի մեթոդի միջոցով նորմալ բաշխման վերլուծությունը ($p<0.05$) ցույց է տվել փոփոխականների ոչ նորմալ բաշխում: Էմպիրիկ ուսումնասիրության արդյունքները ներկայացված են **«Փորձարարական հետազոտության արդյունքների որակական և քանակական վերլուծություն»** վերտառությամբ երկրորդ ենթագլխում:

Հետազոտության առաջին փուլում կիրառվել են մի շարք մեթոդիկաներ՝ ուղղված սոցիալական նևրոտիզմի գնահատման սոցիալ-հոգեբանական հայեցակարգի բնութագրմանը: Այս փուլում հիմնական և ստուգիչ բոլոր խմբերում իրականացվել են մեթոդիկաներ՝ վերհանելու համար՝

- նեյրոտիզմի (Այզենկի անձնային հարցարան, «Մեծ հնգյակ» հարցարան).
- տագնապայնության (Շպիլբերգեր-Խանինի անձնային և իրավիճակային տագնապայնության թեստ).
- սոցիալական ֆրուստրացիայի (Սոցիալական ֆրուստրացիայի գնահատման սանդղակ).
- հետաձգված կյանքի համախտանիշի («Հետաձգված կյանքի համախտանիշի ախտորոշում» հեղինակային հարցաթերթիկ) մակարդակները:

Փուլ 2-ով կիրառվել են մեթոդիկաներ՝ ուղղված Ենթավարկած 1-ի և Ենթավարկած 2-ի ապացուցմանը: Այս փուլում հիմնական և ստուգիչ բոլոր խմբերում իրականացվել են մեթոդիկաներ՝ վերհանելու համար՝

- կյանքից բավարարվածության («Կյանքից բավարարվածության» սանդղակ).
- խմբային հուսալիության (Խմբում ինտեգրման սոցիալ-հոգեբանական ինքնագնահատման մեթոդիկա, Խմբում հոգեբանական մթնոլորտի բացահայտման մեթոդիկա, Սոցիալ-հոգեբանական մթնոլորտի գնահատման տեսա-անալոգային սանդղակ) աստիճանները.
- սոցիալական նևրոտիզմի գնահատման առանձնահատկությունները (Սոցիալական նևրոտիզմի գնահատման հեղինակային սանդղակ).
- փոխկախյալության (Փոխկախյալության ինքնագնահատման սանդղակ) աստիճանը:

Փուլ 3-ով կիրառվել է վիճակագրական վերլուծության մեթոդը՝ ուղղված Վարկածի ապացուցմանը: Այս փուլում հիմնական և ստուգիչ բոլոր խմբերում վերհանվել են՝

- հետաձգված կյանքի համախտանիշի, սոցիալական ֆրուստրացիայի, տագնապայնության և նևրոտիզմի մակարդակի դրական համահարաբերակցային կապերը.
- սոցիալական նևրոտիզմի գնահատման և կյանքից բավարարվածության ու խմբային հուսալիության աստիճանների բացասական համահարաբերակցային կապերը.
- սոցիալական նևրոտիզմի գնահատման և տարբեր տարիքի անձանց փոխկախյալության աստիճանի դրական համահարաբերակցային կապերը:

Այզենկի անձնային հարցարանի կիրառման արդյունքներով վեր են հանվել ուսումնասիրության հիմնական խումբը ներկայացնող մասնակիցների շրջանում պսիխոտիզմի մակարդակի որոշ սեռային տարբերություններ: Այսպիսով՝ կանանց մոտ պսիխոտիզմի համեմատաբար ավելի բարձր մակարդակ է նկատվել տղամարդկանց համեմատ: Միակ ցուցանիշը, որի դեպքում տղամարդկանց խումբը ցույց է տվել ավելի բարձր մակարդակ, ասերտիվության փոփոխականն էր: Բռնագաղթած տղամարդկանց խումբը ցույց է տվել նևրոտիզմի կայուն արտահայտված աստիճան: Բոլոր փոփոխականների տոկոսային ցուցանիշներում տղամարդկանց պատասխանները գրանցել են ավելի բարձր միավորներ, քան կանանց պատասխանները: Տագնապայնության, ցածր ինքնագնահատականի և ինքնավարության պակասն արտահայտող փոփոխականների բարձր մակարդակն առավել ցայտուն է տղամարդ ներգաղթյալների շրջանում: Այզենկի անձնային հարցարանի արդյունքներով պարզ է դարձել, որ հիմնական և ստուգիչ խմբերի պատասխաններում էականորեն տարբերվել են միայն որոշ տարիքային ենթախմբերի ցուցանիշները: Նեյրոտիզմի ցուցանիշները թեև դրսևորել են որոշ շեշտվածություն բոլոր հետազոտվող ենթախմբերում: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ առավել ընդգծված էին հիմնական խմբի 1-ին, 3-րդ և 4-րդ տարիքային ենթախմբերը: Հարցարանի ամփոփ տվյալները վկայում են նրա մասին, որ պսիխոտիզմի, էքստրավերտության և նեյրոտիզմի փոփոխականներն արտահայտում են անձի անհատական հատկությունները, որոնք, ըստ բռնագաղթի սոցիալ-միջավայրային գործոնի առկայության, դրսևորել են որոշ շեշտվածություն: Այզենկի անձնային հարցարանի ամփոփ տվյալները ենթարկվել են համահարաբերակցային վերլուծության՝ ըստ աշխատանքով գոհունակության աստիճանի: Հետազոտության հիմնական խմբում գերակշռում են բացասական համահարաբերակցային կապերը նեյրոտիզմի և աշխատանքով գոհունակության աստիճանների միջև՝ հասնելով առավելագույն ցուցանիշի երկրորդ հիմնական տարիքային խմբում /-.771***/: Ստուգիչ խմբերում համահարաբերակցային կապերը համեմատաբար ավելի թույլ են արտահայտված, ինչը խոսում է նրա մասին, որ ստուգիչ խմբի ներկայացուցիչները, այն էլ գրեթե բոլոր տարիքային խմբերում, հարմարվել են աշխատանքային միջավայրին և դրսևորում են մշակված հարմարման քոփինգ ռազմավարություններ:

Նեյրոտիզմի մակարդակը հետազոտվել է նաև «Մեծ հնգյակ» հարցարանի միջոցով, իսկ արդյունքները համեմատվել են Այզենկի անձնային հարցարանի արդյունքների հետ (Նկար 1):



Նկար 1. Նեյրոտիզմի փոփոխականների բաշխումը 5 հիմնական խմբերի միջև, (%)

Սպիլբերգեր-Խանինի իրավիճակային տագնապայնության սանդղակի միջոցով ստացված արդյունքները հետևյալն էին՝

- հիմնական խումբ 1 ամենացածր ընդհանուր (n=860) միավորը կազմել է 18 միավոր, իսկ ամենաբարձրը՝ 66 միավոր, միջին միավորը՝ 36.
- հիմնական խումբ 2 - ամենացածր ցուցանիշը կազմել է 22 միավոր, իսկ ամենաբարձրը՝ 64 միավոր, միջինը 39 միավոր.
- հիմնական խումբ 3 - ամենացածր ցուցանիշը կազմել է 16 միավոր, իսկ ամենաբարձրը՝ 61 միավոր, միջինը 34 միավոր.
- հիմնական խումբ 4 - ամենացածր ցուցանիշը կազմել է 17 միավոր, իսկ ամենաբարձրը՝ 58 միավոր, միջինը 30 միավոր.
- հիմնական խումբ 5 - ամենացածր ցուցանիշը կազմել է 24 միավոր, իսկ ամենաբարձրը՝ 66 միավոր, միջինը 38 միավոր:

Իրավիճակային տագնապայնության տոկոսային միավորները համեմատվեցին անձնային տագնապայնության տոկոսային միավորների հետ, որոնք ցույց տվեցին իրավիճակային տագնապայնության համեմատաբար ավելի բարձր մակարդակ գրեթե բոլոր խմբերում: Սպիլբերգեր-Խանինի մեթոդիկայի արդյունքներով կարող ենք եզրակացնել այն, որ բռնագաղթած անձանց շրջանում տիրապետող է իրավիճակային տագնապայնության դրսևորումը, հատկապես դա ակնառու էր տարիքային 3-րդ խմբում, թեպետ, համեմատած ստուգիչ խմբի ցուցանիշների հետ, հիմնական բոլոր տարիքային խմբերում իրավիճակային տագնապայնության տոկոսային ցուցանիշները որոշակիորեն ավելի արտահայտված էին, քան ստուգիչ խմբում:

Կյանքից բավարարման ինքնագնահատման սանդղակի միջոցով ստացված տվյալների տարբերությունն՝ ըստ հիմնական և ստուգիչ խմբերի, հետևյալն էր: Հարցվողների հիմնական խմբում տիրապետողը ինքնագնահատման ցածր և միջին սանդղակներն էին, մինչդեռ ստուգիչ խմբում ինքնագնահատման շեշտվածությունը փոխվում է դեպի բարձր գնահատականները: Ներկայացնենք այս եզրակացությունն ամփոփ տվյալների միջոցով: Այս մեթոդիկայի արդյունքներով կարող ենք եզրակացնել բռնագաղթի բացասական ազդեցությունը կյանքից բավարարման ինքնագնահատականների վրա, որոնք կարևոր ցուցիչ են՝ պարզելու նաև սոցիալական ներոտիզմի հայեցակարգի գնահատման առանձնահատկությունները:

Հետաձգված կյանքի համախտանիշն առավելագույնս արտահայտվում է հիմնական տարիքային խմբերում: Հատկապես, գերակշռող էին հիմնական 3-րդ տարիքային խմբում գրանցված բարձր ցուցանիշները: Եվ հակառակը, ստուգիչ տարիքային խմբերում հետաձգված կյանքի համախտանիշի բարձր մակարդակը գրեթե մնաց անփոփ բոլոր տարիքային խմբերում, իսկ գերակշռողը դարձավ միջին, իսկ 5-րդ տարիքային խմբում՝ ցածր մակարդակը:

Անհատականության գծերից մեկի՝ ներոտիզմի, ինչպես նաև կյանքից գոհունակության և հետաձգված կյանքի համախտանիշի ախտորոշման մեթոդների կիրառման արդյունքները ցույց տվեցին որոշակի միտումներ: Մասնավորապես, ամենաբարձր տոկոսային ցուցանիշները գրանցվել են 3-րդ խմբի հարցվողների պատասխաններում՝ ըստ ներոտիզմի և հետաձգված կյանքի համախտանիշի ախտորոշման մեթոդի: Հիմնական 3-րդ տարիքային խմբում կյանքից գոհունակության ընդհանուր մակարդակի գնահատման արդյունքները, ընդհակառակը, բոլոր խմբերի պատասխաններից ամենացածրն էին:

Բոլոր մեթոդների տոկոսային ցուցանիշները ստանալուց հետո իրականացվել է տվյալների կորելյացիոն վերլուծություն:

Ապացուցվել է, որ սոցիալական ներոտիզմի երևույթն առավել ուժեղ է արտահայտվում 21-50 տարեկան տարիքային խմբերում (հատկապես՝ 31-40 տարեկան տարիքային խմբում): Կոռելյացիոն վերլուծության համաձայն՝ բացասական կապեր են հայտնաբերվել նաև կյանքից բավարարվածության փոփոխականների և հետաձգված կյանքի համախտանիշի միջև: Փորձարարական ուսումնասիրության շրջանակներում կարելի է եզրակացնել, որ որքան բարձր է կյանքից բավարարվածության աստիճանը, այնքան ավելի թույլ է արտահայտվում հետաձգված կյանքի համախտանիշը, և, համապատասխանաբար, սոցիալական ներոտիզմի երևույթը: Մյուս կողմից՝ դրական կապեր են նկատվել ներոտիզմի և հետաձգված կյանքի համախտանիշի փոփոխականների միջև:

Փորձարարական ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ապացուցվել է, որ սոցիալական ներոտիզմի երևույթն առավել ուժեղ է արտահայտվում 21-50 տարեկան տարիքային խմբերում (հատկապես՝ 31-40 տարեկան տարիքային խմբում): Կոռելյացիոն վերլուծության համաձայն՝ բացասական կապեր են հայտնաբերվել նաև կյանքից բավարարվածության փոփոխականների և հետաձգված կյանքի համախտանիշի միջև: Փորձարարական ուսումնասիրության շրջանակներում կարելի է եզրակացնել, որ որքան բարձր է

կյանքից բավարարվածության աստիճանը, այնքան ավելի թույլ է արտահայտվում հետաձգված կյանքի համախտանիշը, և, համապատասխանաբար, սոցիալական նևրոտիզմի երևույթը:

Սոցիալական նևրոտիզմի գնահատման հեղինակային սանդղակի կիրառման արդյունքներով սոցիալական նևրոտիզմի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների գնահատականներում ամենաածայրահեղ արձագանքները գրանցվել են հիմնական 1-ին խմբում: Այս խմբում մենք տեսնում ենք, որ բռնազաղթած անձինք իրենց դժգոհությունը, սոցիալական միջավայրում հաղորդակցվելու դժվարությունները և կյանքի իմաստի կորուստը հիմնականում կապում են սոցիալական նևրոտիզմի սուբյեկտիվ գործոնների հետ, մինչդեռ օբյեկտիվ գործոնները ստացել են ամենացածր գնահատականները: Ներգաղթյալների 2-րդ խմբում գրանցված պատասխանները նույնական էին. հարցվածները գրեթե հավասարապես բարձր են գնահատել սոցիալական նևրոտիզմին ազդող ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ գործոնները՝ առաջին խմբի գործոնների աննշան գերակշռությամբ: 3-րդ և 4-րդ խմբերը նախապատվությունը տվել են օբյեկտիվ գործոններին՝ գնահատելով դրանցից անկախ գոյություն ունեցող փաստը, այսինքն՝ արտաքին միջավայրի գործոնները, որպես սոցիալական նևրոտիզմի դրսևորումների և դրանց կործանարար հետևանքների որոշիչներ: Գործոնների սուբյեկտիվ նշանակությունը վերստին մեծանում է հիմնական 5-րդ խմբում, որտեղ, 1-ին խմբի համեմատ, փոքր ինչ ավելի մեղմ, սակայն կրկին կարևորվում է սոցիալական նևրոտիզմի սուբյեկտիվ կողմը: Ներգաղթյալների գնահատականներում գերակշռում են ներքին, սուբյեկտիվ գործոնների գնահատականները (Նկար 1, Նկար 2):



Նկար 1. Փոխկախյալության տոկոսային ցուցանիշներ



Նկար 2. Սոցիալական ֆրուստրացիայի տոկոսային ցուցանիշներ

Հիմնական 1-2 տարիքային խմբերում տիրապետում էր փոխկախյալության բարձր մակարդակը, որն էլ ավելի վտանգավոր աճի միտում դրսևորեց 3-5 տարիքային խմբերում: Ստուգիչ խմբերում ծայրահեղ բարձր մակարդակը նկատվել է միայն 4-5 տարիքային խմբերի գնահատականներում:

Սոցիալական ֆրուստրացիան որոշակիորեն դրսևորվել է հիմնական խմբում, որտեղ շեշտադրվել է 3-5-րդ տարիքային խմբերում սոցիալական ֆրուստրացիայի որոշակի և շատ բարձր մակարդակներով: Ստուգիչ խմբում, ընդհակառակը, նկատվում է սոցիալական ֆրուստրացիայի մակարդակի թույլ արտահայտվածություն գրեթե բոլոր տարիքային խմբերում:

Սոցիալական ֆրուստրացիայի և փոխկախյալության միջև կապը ցույց է տրվում ստորև նկարագրված ցուցանիշների կոռելյացիոն վերլուծության միջոցով: Տվյալների վիճակագրական մշակումը կատարվել է «JASP 0.17.3.0» ծրագրաշարի միջոցով (Spearman's Correlations , $p < .01$, Նկար 3):



	2
codependency low level - absence of social frustration	0.977
codependency medium level - neuroticism medium level	0.987
codependency medium level - neuroticism high level	-0.978
codependency high level - neuroticism medium level	-0.957
codependency high level - neuroticism high level	0.945
absence of social frustration - high level of social frustration	-0.962
absence of social frustration - neuroticism low level	0.256
high level of social frustration - neuroticism high level	0.834
neuroticism medium level - neuroticism high level	-0.997
codependency low level - high level of social frustration	-0.897

Նկար 3. Համահարաբերակցային վերլուծության ամփոփ տվյալներ

Սոցիալական նևրոտիզմի ուսումնասիրությունը բացահայտել է որոշակի փոխկապվածություն փոխկախյալության և սոցիալական ֆրուստրացիայի մակարդակների միջև: Էմպիրիկ տվյալները մատնանշում են սոցիալական նևրոտիզմի դրսևորման մեջ տարիքային որոշակի օրինաչափություններ և հիմք են հանդիսանում սոցիալական նևրոտիզմի մեթոդաբանական հայեցակարգ մշակելու համար, որը ներառում է փոխկախյալության և սոցիալական ֆրուստրացիայի մակարդակների միջև դրական փոխկապվածություն:

Խմբում ինտեգրման աստիճանը որոշելու և թիմի հոգեբանական մթնոլորտի բացահայտման մեթոդիկաների արդյունքներով պարզվել է, որ հիմնական խմբի պատասխաններում բոլոր փոփոխականները՝ խմբի ամբողջականությունը պահպանելու ցանկությունը, համախմբումը, կազմակերպվածությունը, տեղեկացվածությունը, պատասխանատվությունը, անձնական կապերը, անկեղծությունը, ուժեղ են արտահայտված: Ստուգիչ խմբի պատասխանները ցույց տվեցին որոշ չափով խմբում ինտեգրման ցուցիչների որոշակի դինամիկ պատկերը, երբ ուժեղ արտահայտված փոփոխականները գնահատվեցին գրեթե հավասար կերպով բարձր և միջին մակարդակներում: Արտահայտված են խմբի ամբողջականությունը պահպանելու ցանկությունը, համախմբումը, կազմակերպվածություն, տեղեկացվածություն, պատասխանատվության բաղադրիչները: Միջին մակարդակն արտահայտված է անձնական կապեր, տեղեկացվածություն, անկեղծություն բաղադրիչներում:

Պարզ է դարձել, որ բռնագաղթած անձանց շրջանում գնահատականներն ավելի հոռետեսական էին և զուսպ, քան ստուգիչ խմբի պատասխանները: Այս ցուցանիշները ևս համալրում են գիտական միտքը սոցիալական ներոտիզմի հայեցակարգի և դրանում խմբի հոգեբանական մթնոլորտի գնահատման վերաբերյալ: Փորձարարական հետազոտության ընթացքում հոգեբանական մթնոլորտն ուսումնասիրվել է նաև խմբի անդամների հոգեբանական համատեղելիության և հաղորդակցական մակարդակի տեսա-անալոգային սանդղակի միջոցով (Նկար 4, Նկար 5):



Նկար 4. Խմբի անդամների հոգեբանական համատեղելիության և հաղորդակցային մակարդակի տեսա-անալոգային սանդղակի գնահատում, հիմնական խումբ



Նկար 5. Խմբի անդամների հոգեբանական համատեղելիության և հաղորդակցային մակարդակի տեսա-անալոգային սանդղակի գնահատում, ստուգիչ խումբ

Ինչպես տեսնում ենք Նկար 4-ից և Նկար 5-ից, հիմնական խմբի գնահատականներում որոշ չափով գերակշռում են բարձր գնահատականները՝ հատկապես, թիմակիցների հետ համատեղ աշխատանք կատարելիս: Կարելի է ենթադրել, որ այս եղանակով բռնագաղթը վերապրած անձինք դրսևորում են

համախմբվելու, ինչպես նաև, իրենց միայնակ չզգալու պահանջմունքները: Երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Սոցիալական նևրոտիզմի հաղթահարմանն ուղղված գիտագործնական առաջարկներ» վերտառությամբ,** ներկայացվել են ինքնակարգավորման և սոցիալական նևրոտիզմի բացասական ներուժի կանխարգելման մի շարք մեթոդներ, առաջ է քաշվել սոցիալական ուսուցման մոդելը, որի հիմքում ընկած է խմբային հուսալիության զարգացման գաղափարը:

- Սոցիալական ուսուցման արժեքային տեխնոլոգիաները դրսևորվում են որպես՝

- սոցիալական հարաբերությունների խթանման միջոցներ, որոնք բնութագրում են համագործակցության ձևերը տարբեր մակարդակներում՝ միջանձնայինից մինչև միջխմբային և ներխմբային փոխազդեցություններ.

- հիմնական և օժանդակ թիմերի միջև փոխազդեցության լծակներ.

- գործընթաց, որն ուղղված է ինչպես ներխմբային, այնպես էլ միջխմբային փոխազդեցությունների զարգացմանը.

- գործընթաց, որն ուղղված է խմբում համատեղ գործունեության ընթացքում աշխատանքի իմաստալից և կառուցողական կատարելագործմանը.

- մեխանիզմներ, որոնք ուղղված են անձի սոցիալական ինքնության, նրա ինքնագնահատականի ինտեգրմանը և բարելավմանը անհատական մակարդակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սոցիալական նևրոտիզմի երևույթը համեմատաբար նոր հասկացություն է: Նևրոտիզմի փիլիսոփայական և հոգեբանական ուսումնասիրություններում տարբերակվում են ուսումնասիրվող երևույթի հետևյալ սոցիալական բաղադրիչները:
2. Սոցիալական նևրոտիզմի երևույթը դիտարկվում է հետաձգված կյանքի համախտանիշի, սոցիալական ֆրուստրացիայի, տագնապայնության երևույթների համալիր, համահարաբերակցային ներկայացման միջոցով:
3. Ստացված արդյունքները ցույց տվեցին նևրոտիզմի դրսևորման սոցիալական բնույթը, ընդգծեցին գիտական ենթադրությունը, որ նևրոտիզմի հոգեբանական երևույթը դրսևորվում է որպես կարևոր սոցիալական բնութագիր և մեծապես որոշում է անձի սոցիալական միջավայրում հարմարվելու և համարժեք փոխազդելու ունակությունը:
4. Սոցիալական նևրոտիզմն արտահայտվում է կյանքից բավարարման ինքնագնահատման սանդղակի միջոցով՝ ինքնագնահատման տիրապետող ցածր և միջին մակարդակներով, հատկապես, 21-40 տարեկան անձանց շրջանում:
5. Նևրոտիզմի և հետաձգված կյանքի համախտանիշի գնահատման ցուցանիշները ցույց տվեցին համահարաբերակցային դրական փոխկապվածության որոշակի միտումներ:
6. Ապացուցվել է, որ սոցիալական նևրոտիզմի երևույթն առավել ուժեղ է արտահայտվում 21-50 տարեկան տարիքային խմբերում (հատկապես՝ 31-40 տարեկան տարիքային խմբում): Կոռելյացիոն վերլուծության

համաձայն՝ բացասական կապեր են հայտնաբերվել նաև կյանքից բավարարվածության փոփոխականների և հետաձգված կյանքի համախտանիշի միջև:

7. Սոցիալական նևրոտիզմը դրսևորվում է փոխկախյալության և սոցիալական ֆրուստրացիայի տիրապետող մակարդակով, որն էլ ավելի վտանգավոր աճի միտում դրսևորեց 31-60 տարեկան անձանց շրջանում: Ստուգիչ խմբերում փոխկախյալության բարձր մակարդակը նկատվել է միայն 41-60 տարեկան անձանց գնահատականներում:
8. Հետազոտության արդյունքները թույլ են տալիս հետագայում համալրելու սոցիալական նևրոտիզմի գնահատման մեթոդաբանական մշակումները ուսումնասիրվող երևույթի այլ բնութագրերի հոգեչափական գործիքակազմի ներկայացմամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ հրապարակումներում:

1. Petrosyan R. M., Social Neuroticism in Psychological Characteristics of Anxiety / Katchar Scientific Periodical. Yerevan, 2023, № 1, 179-185.
2. Petrosyan R. M., Group Reliability in the Context of Psychological Diagnostics of Social Neuroticism / Katchar Scientific Periodical. Yerevan, 2024, № 2, 170-183.
3. Petrosyan R. M., Characterization of Social Neuroticism in the Context of Intrapersonal Conflict / Katchar / Academia. Social Science Periodical. Yerevan, 2025, № 1, 20-30.
4. Petrosyan R. M., The Psychological Characteristics of Social Neuroticism / Modern Psychology Scientific Bulletin, Yerevan State University, Yerevan, 2025, 1(16), 65-74.
5. Petrosyan R. M., Destructive Consequences of Social Neuroticism and Psychological Means of Prevention / Main Issues of Pedagogy and Psychology, Yerevan, 2025, 12(1), 68-78.
6. Petrosyan R. M., Hakobyan N. R., Philosophical Interpretations of Social Neuroticism, Anxiety and Wellbeing / Իմաստություն/ (Wisdom), VOL 31, ISSUE 2: 2025, 16-22.

ПЕТРОСЯН РАФИК МЕРУЖАНОВИЧ
КОНЦЕПЦИЯ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ ОЦЕНКИ СОЦИАЛЬНОГО НЕВРОТИЗМА В СОВРЕМЕННЫХ ИММИГРАЦИОННЫХ ПРОЦЕССАХ (НА ПРИМЕРЕ ВЫНУЖДЕННЫХ ПЕРЕСЕЛЕНЦЕВ)

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03. "Социальная психология".

Защита состоится 27.01.2026 г. на заседании специализированного совета по психологии 064 Комитет по высшему образованию и науке по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу: Ереван, 0010, ул. Тигран Мец, 17.

РЕЗЮМЕ

Актуальность диссертационного исследования обусловлена тем, что концепция социального невротизма важна в контексте социально-психологической оценки проблемы. В данном исследовании представлены основные формы и особенности деструктивных последствий социального невротизма, проявляющихся в процессе адаптации и социализации индивидов и социальных групп, насильственно перемещенных из родной среды в другие места.

Цель исследования:

Изучить феномен социального невротизма в контексте взаимосвязи неблагоприятных социально-средовых условий и личностной уязвимости, разработать методические рекомендации, направленные на снижение негативного потенциала социального невротизма (на примере вынужденных переселенцев и социальных групп).

Основные задачи исследвания:

· Изучить концептуальные основы и современные интерпретации определения невротизма.

· Уточнить социально-контекстуальные рамки социального невротизма.

· Представить концептуальное исследование социального невротизма на примере вынужденных переселенцев.

· Экспериментальнын путем выявить такие особенности социального невротизма, как уровень групповой надежности, синдром отложенной жизни, уровень социальной фрустрации и тревожности.

· Проанализировать взаимосвязь особенностей социального невротизма на примере вынужденных переселенцев с помощью корреляционного анализа.

· Представить научно-практические предложения, направленные на снижение негативного потенциала социального невротизма.

Гипотеза исследования.

Предполагается, что социально-психологическая концепция оценки социального невротизма среди вынужденных переселенцев характеризуется положительными корреляционными связями между синдромом отсроченной жизни, социальной фрустрацией, тревожностью и уровнем нейротизма.

1. Чем выше уровень удовлетворенности жизнью и группового доверия, тем слабее выражена оценка социального невротизма.

2. В социальной среде социальный невротизм оценивается по положительным корреляционным связям со степенью созависимости людей разного возраста.

Научная новизна исследования.

Определены социально-контекстные характеристики социального невротизма, выделены социально-средовые особенности определения невротизма, выявлены концептуальные компоненты оценки социального невротизма и корреляции между ними, такие как, с одной стороны, положительные корреляции между уровнем синдрома отсроченной жизни, социальной фрустрацией, тревожностью, созависимостью и невротизмом, а с другой стороны, отрицательные корреляции между удовлетворенностью жизнью, групповым доверием и социальным невротизмом. Изложены методические инструменты снижения негативного влияния социального невротизма в процессе адаптации человека к новой среде.

Теоретическая и практическая значимость исследования.

Изучение социального невротизма может пролить свет на социально-средовые особенности иммиграционных процессов вынужденных переселенцев. Рассмотрение этого вопроса в контексте отношения личности к социальным реалиям и ожиданиям на будущее имеет большой теоретический и практический потенциал для изучения феноменов синдрома отложенной жизни, социальной фрустрации, созависимости и групповой надежности, а также для психологического консультирования, направленного на подавление негативного потенциала социального невротизма.

Достоверность результатов. Достоверность результатов обусловлена методологической обоснованностью, соответствием цели, гипотезы, задач и методов исследования. Теоретические положения и выводы работы получены на основе многостороннего научного анализа экспериментальных данных.

Апробация и внедрение результатов исследования.

Результаты исследования обсуждались на заседаниях кафедры психологии Международного научно-образовательного центра НАН РА, на круглых столах, семинарах и экспертных дискуссиях в различных центрах психического здоровья. Результаты исследования были обобщены в 8-ми научных публикациях.

Структура работы.

Диссертация состоит из теоретической и экспериментальной частей: введения, трех глав, выводов, списка литературы и приложений. Объем работы составляет 138 страниц. Было использовано 220 источника литературы на армянском и иностранных языках.

По теме диссертации опубликовано 8 статей.

PETROSYAN RAFIK

THE CONCEPT OF SOCIAL-PSYCHOLOGICAL ASSESSMENT OF SOCIAL NEUROTICISM IN MODERN IMMIGRATION PROCESSES (ON THE EXAMPLE OF FORCED MIGRANT PERSONS)

Dissertation for pursuing a degree of candidate of psychological sciences in speciality 19.00.03. "Social Psychology". The defence of this thesis will take place at 27.01.2026 at the session of Degree Awarding commission 064 specializing in Psychology of the The Higher Education and Science Committee of the Republic of Armenia at Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan.

Address: Tigran Mets street 17, Yerevan, Republic of Armenia.

SUMMARY

Actuality.

The relevance of this dissertation research stems from the importance of the concept of social neuroticism in the context of a socio-psychological assessment of the problem. This study presents the main forms and characteristics of the destructive consequences of social neuroticism, manifested during the adaptation and socialization process of individuals and social groups forcibly displaced from their native environments to other locations.

Objective of the research.

To study the phenomenon of social neuroticism in the context of the relationship between unfavorable socio-environmental conditions and personal vulnerability, to develop methodological recommendations aimed at reducing the negative potential of social neuroticism (using the example of internally displaced persons and social groups).

Main tasks of the research are:

• Explore the conceptual foundations and modern interpretations of the definition of neuroticism.

• Clarify the socio-contextual framework of social neuroticism.

• Present a conceptual study of social neuroticism using the example of internally displaced persons.

• Experimentally identify such characteristics of social neuroticism as the level of group reliability, deferred life syndrome, and the level of social frustration and anxiety.

• Analyze the interrelationships between the characteristics of social neuroticism using the example of internally displaced persons using correlation analysis.

• Present scientific and practical proposals aimed at reducing the negative potential of social neuroticism.

Hypothesis of the research.

It is assumed that the socio-psychological concept of assessing social neuroticism among internally displaced persons is characterized by positive correlations between deferred life syndrome, social frustration, anxiety, and the level of neuroticism.

1. The higher the level of life satisfaction and group trust, the weaker the assessment of social neuroticism.

2. In the social environment, social neuroticism is assessed by positive correlations with the degree of codependency in people of different ages.

Scientific novelty of the research.

The socio-contextual characteristics of social neuroticism are defined, the socio-environmental features of its definition are highlighted, and conceptual components of social neuroticism assessment and correlations between them are identified. These include, on the one hand, positive correlations between the level of deferred life syndrome, social frustration, anxiety, codependency, and neuroticism, and, on the other hand, negative correlations between life satisfaction, group trust, and social neuroticism. Methodological tools for reducing the negative impact of social neuroticism during human adaptation to a new environment are presented.

Theoretical and practical significance of the research.

Studying social neuroticism can shed light on the socio-environmental characteristics of the immigration processes of forced migrants. Examining this issue in the context of the individual's relationship to social realities and future expectations has great theoretical and practical potential for studying the phenomena of deferred life syndrome, social frustration, codependency, and group reliability, as well as for psychological counseling aimed at suppressing the negative potential of social neuroticism.

Credibility of results.

The reliability of the results is due to methodological validity, the correspondence of the goal, hypothesis, tasks and research methods. Theoretical provisions and conclusions of the work were obtained on the basis of a multilateral scientific analysis of experimental data.

Approbation and adoption of the research results.

The study results were discussed at meetings of the Department of Psychology of the International Scientific and Educational Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia, as well as at roundtables, seminars, and expert discussions at various mental health centers. The results were summarized in eight scientific publications.

Structure of the thesis.

The dissertation consists of the theoretical and experimental parts: introduction, three chapters, conclusions, a reference list and applications. The volume of work is 138 pages. 220 sources of literature in Armenian and foreign languages were used.

Eight articles have been published on the subject of the thesis.